Արձանագրություն N 4
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ դեղի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/23/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Սեպտեմբեր» 2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս.Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Մխիթարյան, Վ.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ներկայացված տեխնիկական բնութագրի շտկման առաջարկի մասին

(Ս.Գրիգորյան)

Ընդունել ի գիտություն, որ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը՝ առաջարկվել էր «Ագաստ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվող տեղեկատվությունը:

«Ագաստ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթուղթ, ըստ որի, «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը ընդգրկված չէ ԱՀԿ նախաորակավորված դեղերի ցանկում, գրանցված չէ ICH անդամ երկներում, սակայն ունի արտադրական գործունեության հավաստագիր (որը պահանջվում էր հրավերով), որի ուժի մեջ է մինչև 26.12.2023թ.՝ ըստ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի:

Որոշվեց. «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել բավարար՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ս.Գրիգորյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ և ստացվել եզրակացություն, ըստ որի «Ագաստ» ՍՊԸ-ի ֆինանսական չափորոշիչը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ս.Գրիգորյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը, ապրանքների ամբողջական նկարագիրը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/23/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «Ագաստ» ՍՊԸ-ն՝ 3,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, **որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/23/2» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս.Գրիգորյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Վ.Մանուկյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան